



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1  
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06  
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» մարտի 2014 թվականի N 33 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՆՎՃԱՐ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԶԱՓԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԶԵՂԶԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Գյումրու համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընդգրկված երեխաների ընտանեկան սոցիալական ծանր պայմանները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետով, 34-րդ կետի 2-րդ պարբերությամբ, <<Նախադպրոցական կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դ) կետով և հիմք ընդունելով իրենց երեխաներին ծնողական վճարներից ազատելու խնդրանքով նախադպրոցական ուսումնական հաստատություններ դիմած ծնողների դիմումները՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընդգրկված երեխաների ծնողական վճարների սահմանված չափի նկատմամբ զեղչեր կիրառելու կարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ (15)

Դեմ (0)

Ձեռնպահ(0)

Ա. Ադամյան  
Ա. Բաղդամյան  
Լ. Բարսեղյան  
Մ. Գաբրյան  
Ա. Գրիգորյան  
Վ. Եղիգարյան  
Գ. Թաթարյան  
Հ. Խաչատրյան  
Տ. Հովհաննիսյան  
Վ. Հունանյան  
Ռ. Մխիթարյան  
Է. Մկրտչյան  
Վ. Շիրինյան  
Մ. Սահակյան  
Տ. Փանոսյան

Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ԾԻՇՏ Է՝  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

*[Handwritten signature]*



Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ

ք. Գյումրի  
«18» մարտի 2014 թ.



#### ԿԱՐԳ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ  
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ԱՆՎՃԱՐ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ  
ՎՃԱՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԶԱՓԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԶԵՂԶԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ**

1. Յուրաքանչյուր նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախող երեխաների սննդի ընդհանուր վարձավճարի մինչև 10 %-ի չափով սննդի վճարը փոխհատուցվում է համայնքի բյուջեի միջոցներից:
2. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում սահմանված ծնողական վճարներից 100 %-ով աջակցման ենթակա են՝
  - 1) երկկողմանի ծնողագուրկ երեխաները,
  - 2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների երեխաները,
  - 3) հաշմանդամություն ունեցող ծնողների երեխաները:
3. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ծնողական վճարներից 50 %-ի չափով աջակցման ենթակա են՝
  - 1) միակողմանի ծնողագուրկ երեխաները,
  - 2) անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների՝ 2 և ավել մանկապարտեզ հաճախող բոլոր երեխաները
  - 3) հաշմանդամություն ունեցող ծնողի երեխաները,
  - 4) հաշմանդամության կարգավիճակ ունեցող երեխաները,
4. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ծնողական վճարներից 25 %-ի չափով աջակցման ենթակա են՝
  - 1) երեք և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների երեխաները:
5. Ծնողական վճարների գեղչերից օգտվելու համար դիմումները և արտոնությունները հաստատող փաստաթղթերը ներկայացվում են համապատասխան նախադպրոցական ուսումնական հաստատություն:
6. Նախադպրոցական ուսումնական հաստատությունը կրթության բաժին է ներկայացնում արտոնություններից օգտվող երեխաների ցանկը և արտոնությունները հաստատող փաստաթղթերը (պատճենները), որի հիման վրա կրթության բաժինը ֆինանսատնտեսագիտական բաժին ներկայացնում է հայտ՝ յուրաքանչյուր նախադպրոցական ուսումնական հաստատությանը հասանելիք դրամաշնորհի չափի մասին, ինչը հիմք է հանդիսանում Գյումրի համայնքի բյուջեից ֆինանսավորման մասին: